ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1) Նիստի անցկացման վայրը, տարին, ամիսը և ամսաթիվը, նիստը սկսելու և ավարտելու ժամերը՝

Երևանի «Հակոբ Կոջոյան» կրթահամալիր /հասցե՝ Երևան, Մաշտոցի 2/1/, 2026 թ. հոկտեմբերի 2՝ ժամը 15:30-18:00:

2) Նիստի օրակարգը և օրակարգային հարցերին կցված փաստաթղթերը, այլ նյութեր՝

1) PISA 2025 միջազգային ստուգատեսի արդյունքների ներկայացում (զեկուցող՝ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյան, հարակից զեկուցող՝ Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության ներկայացուցիչ Արմեն Մարտիրոսյան)
2) Հարց ու պատասխան

Օրակարգին կցված փաստաթուղթ՝

Օրակարգի վերաբերյալ երկու զեկույց

3) Նիստին մասնակցող խորհրդի անդամների, հրավիրված անձանց տվյալները՝

Նախարարին կից հասարակական խորհրդի 44 անդամից նիստին մասնակցել է 24-ը՝

N	ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ	ԱՇԽԱՏԱՎԱՅՐ
1.	Ժաննա Անդրեասյան	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար
2.	Նազանի Հարությունյան	Հրազդանի թիվ 2 հիմնական դպրոցի ուսուցչուհի, մանկավարժների մենթոր-վերապատրաստող
3.	Նվեր Սարգսյան	Աշտարակի թիվ 5 ավագ դպրոցի ծնողական խորհրդի նախագահ
4.	Շողակաթ Բաբայան	Երևանի թիվ 50 հիմնական դպրոցի վարչատնտեսական համակարգող
5.	Տիգրան Մարտիրոսյան (հեռավար մասնակցություն)	«Թատերակետեր» թատերագիտական կայքի խմբագիր, ՀԹԳՄ թատերագիտության գծով քարտուղար
6.	Տիգրան Ենգիբարյան	Երևանի թիվ 45 հիմնական դպրոց

7.	Անուշ Սարուխանյան	Վանաձորի թիվ 8 հիմնական դպրոցի տնօրեն
8.	Արմեն Խաչատրյան	«Մայր Հայաստան» ռազմական պատմության թանգարանի գիտական բաժնի վարիչ
9.	Մխիթար Գասպարյան	ԿՋՆԱԿ-ի ուսուցիչների մասնագիտական զարգացման բաժնի մասնագետ
10.	Աննա Սեթաղյան	ՌԵԱ փառատոնի համագործակցության և արտաքին կապերի համակարգող

N	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ	ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ
1.	«Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամ	Արմեն Հովհաննիսյան
2.	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ	Վահրամ Սողոմոնյան
3.	Ժողովրդավարության զարգացման հիմնադրամ	Արփի Հարությունյան
4.	Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն	Սեդրակ Վարդանյան
5.	Հայ-չինական գործընկերության կենտրոն	Արմեն Մխիթարյան
6.	«Հայաստանի հաշվապահների ասոցիացիա	Լիլիթ Անտոնյան
7.	«Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ	Մարիաննա Ավագյան
8.	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն	Արմեն Մարտիրոսյան
9.	Հայաստանի գործատուների հանրապետական միություն	Լիլիթ Ադամյան
10.	Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն	Գևորգ Մանուկյան (հեռավար մասնակցություն)
11.	«Հույս և ապագա» ՀԿ	Էլմիրա Պողոսյան
12.	«Ռեստարտ Գյումրի» ԵՔԿ ՀԿ	Գևորգ Ղուկասյան
13.	«Երիտասարդները հանուն փոփոխության» ՀԿ	Գրիգոր Ջանիկյան
14.	«Մարզական հոգեբանների ֆեդերացիա» ՀԿ	Անժելա Բարխուդարյան

Հրավիրված անձինք՝

Աննա Բաբաջանյան	ԿԳՄՍ նախարարի տեղակալ
Թամարա Սարգսյան	ԿԳՄՍՆ հանրակրթության վարչության պետ
Հովհաննես Յուքինյան	ԿԳՄՍ նախարարի մամուլի քարտուղար
Հեղինե Հովհաննիսյան	ԿԳՄՍՆ հասարակայնության հետ կապերի բաժնի պետ, խորհրդի աշխատանքների համակարգող

Գայանե Առաքելյան	ԿԳՄՄՆ հասարակայնության հետ կապերի բաժնի ավագ մասնագետ, խորհրդի աշխատանքների պատասխանատու

4) Քննարկվող հարցերի և դրանց վերաբերյալ ներկայացված դիրքորոշումների (գրավոր կամ բանավոր) հիմնական դրույթները.

Կայացել է ԿԳՄՍ նախարարին կից հասարակական խորհրդի հերթական նիստը, որն այս անգամ անցկացվել է Երևանի «Հակոբ Կոջոյան» կրթահամալիրում: Նիստը վարել է նախարար Ժաննա Անդրեասյանը. ներկա է եղել նաև ԿԳՄՍ նախարարի տեղակալ Աննա Բաբաջանյանը, որը համակարգում է հանրակրթության ոլորտը:

Օրակարգում ընդգրկված էր մեկ հարց՝ PISA 2025 միջազգային ստուգատեսի արդյունքների ներկայացում. վերոնշյալ հարցը քննարկելու պայմանավորվածությունը ձեռք էր բերվել խորհրդի նախորդ նիստի ընթացքում: Որպես հիմնական զեկուցող հանդես է եկել նախարարը, իսկ որպես հարակից զեկուցող՝ հասարակական խորհրդի անդամ Արմեն Մարտիրոսյանը:

Ողջունելով ներկաներին՝ **Ժաննա Անդրեասյանը** նշել է, որ PISA ստուգատեսին միանալը եղել է ՀՀ Կառավարության ամենակարևոր որոշումներից մեկը՝ ներկայացնելով, թե ինչ հնարավորություններ է այն տալիս մեր երկրին: Նրա խոսքով՝ PISA հետազոտությունը 15 տարեկան սովորողների միջազգային գնահատում է, որը ցույց է տալիս, թե ինչպես է սովորողը գիտելիքը կիրառում կյանքի տարբեր իրավիճակներում: Այն անցկացվում է չորս տարին մեկ անգամ. Հայաստանն առաջին անգամ ստուգատեսին մասնակցել է 2025 թվականին, որին ներկայացված է եղել 91 երկիր: Այն անցկացվել է երեք հիմնական ուղղությամբ՝ բնական գիտություններ, մաթեմատիկա և ընթերցանություն: Նախարարը մանրամասն ներկայացրել է, թե բոլոր երեք ուղղություններով ստուգատեսի նվազագույն շեմը հաղթահարած սովորողը ինչ պետք է կարողանա անել: Ժաննա Անդրեասյանը տեղեկացրել է, որ հետազոտությանը մասնակցել է ՀՀ 299 դպրոցի 6858 աշակերտ, որոնց 88%-ը եղել է 10-րդ դասարանցի: Դպրոցների ընտրանքն ամբողջությամբ իրականացրել է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը: Հարցաթերթը նույնական է եղել բոլոր երկրների համար և թարգմանվել ու տրամադրվել է ՏՀԶԿ-ի կողմից: Նախարարը խորհրդի անդամներին ներկայացրել է, թե ինչ նպատակով է ՀՀ Կառավարությունը որոշում կայացրել միանալ հետազոտությանը. «Հանրակրթության բարեփոխման տրամաբանության հիմքում դրված է, որ գիտելիքի վրա հիմնված կրթությունից պետք է անցում կատարել դեպի կոմպետենցիոն մոտեցման, և հանրակրթության պետական չափորոշիչը թվարկում է այն 8 հիմնական կարողունակությունները, որոնց պետք է բավարարի 12-ամյա կրթությամբ յուրաքանչյուր շրջանավարտ: Մեզ համար PISA-ն դարձել է շատ ուղիղ խողովակ՝ ստուգելու մեր երեխաների կոմպետենցիաների մակարդակը մինչև այս մեծածավալ բարեփոխումները, այնուհետև ունենալ դինամիկ տվյալներ և ամեն շրջափուլին գնահատել՝ ինչպես է իրավիճակը փոխվում և ավելի խորքային վերլուծության միջոցով հասկանալ, թե

բարեփոխումներում ինչ լավարկումների կարիք կա: Առաջիկայում պատրաստվում ենք մեր ազգային զեկույցը հրապարակել, որի նպատակով Հայաստանի տվյալները համեմատել ենք երեք երկրների տվյալների հետ՝ էստոնիա, Վրաստան և Ռումինիա: Էստոնիան ընտրել ենք որպես բարձր արդյունք ունեցող հետխորհրդային ինստիտուցիոնալ փորձով համակարգ, Վրաստանը՝ որպես տարածաշրջանի երկիր, իսկ Ռումինիան՝ որպես չափորոշչի բարեփոխումների փորձ ունեցող երկիր՝ արդյունքը գնահատելու նպատակով»: Ըստ նախարարի՝ վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ սովորողների մոտ առկա են թույլ և ուժեղ տեղեր, որը պետք է ամբողջության մեջ գնահատել: «Մեր երեխաները բավականին բարձր՝ 10-ից 9 միավոր են գրանցել հարմարվողականությունից, ինչը շատ լավ է, քանի որ տարբեր իրավիճակներում ճկուն լինելու և իրենց դրսևորելու միտվածություն ունեն: Մեր երեխաները նաև բավականին նպատակասլաց են. այս ուղղությամբ նույնպես 9 միավոր են գրանցել, ինչը նշանակում է, որ առկա է աշխատելու լավ ռեսուրս: Պատկանելիության զգացումը դպրոցին նույնպես բարձր է՝ 8 միավոր, իսկ դպրոցի արժեքի գիտակցումը՝ 7 միավոր: Ամենամտահոգիչ խնդիրը, որը ոչ միայն մեր երեխաներն ունեն, օգնության դիմելու կարողությունն է, որը շատ ցածր արդյունք է գրանցել: Պիտի աշխատենք, որ մեր երեխաներն ավելի բաց լինեն, կարողանան ճիշտ ձևակերպել իրենց խնդիրը և դրա համար աջակցության դիմեն: Հետաքրքրասիրությունը նույնպես լուրջ խնդիր է. մոտիվացիան ևս երկու միավոր է ստացել, որտեղ նույնպես աշխատանքի լուրջ տեղ կա»,-նշել է նախարարը՝ հաջորդիվ անդրադառնալով գիտելիքի կիրառելիության հետ կապված խնդիրներին՝ ներկայացնելով Հայաստանի գրանցած միավորների համադրությունն այլ երկրների հետ: Ժաննա Անդրեասյանը փաստել է, որ գիտության և մաթեմատիկայի մասով պատկերը մտահոգիչ է, սակայն ամենավատ ցուցանիշները, ինչպես Հայաստանը, այնպես էլ մասնակից բոլոր երկրները, գրանցել են ընթերցանությունից, որն ամենալուրջ մարտահրավերներից մեկն է. «Սա նշանակում է, որ մեր սովորողների շուրջ ամեն երրորդն է, որը հաղթահարել է նվազագույն շեմը գիտությունից, շուրջ ամեն երրորդն է, որ հաղթահարում է նվազագույն շեմը մաթեմատիկայից, և ամեն հինգերորդն է ընդամենը, որ կարողանում է դա անել ընթերցանությունից: Միևնույն ժամանակ տեսնում ենք, որ բարեփոխումների տրամաբանությունը որոշակիորեն իր առաջին դրական ազդակները մեզ փոխանցում է. կարողունակությունների հիման վրա ամենավաղը սկսել ենք աշխատել Տավուշի մարզում, որտեղ ընդունելության քննությունների արդյունքների միջինը բնագիտական առարկաներից էապես ավելի բարձր է, քան հանրապետության միջինը: Սրան, բացի չափորոշչից, նպաստել են կառավարության կողմից իրականացվող խրախուսման մի շարք ծրագրեր»: Ժաննա Անդրեասյանը ներկայացրել է նաև ՀՀ կրթական համակարգի ուժեղ կողմերից մեկը. անհավասարությունը, սոցիալ-տնտեսական գործոնով պայմանավորված, համեմատաբար ավելի փոքր է, քան այլ երկրներում: Հաջորդ կարևոր ցուցանիշը, որ ներկայացրել է ժաննա Անդրեասյանը, այն է, թե ինչպես են տարբերվում տղաների և աղջիկների արդյունքները: Մաթեմատիկայում դրանք հավասար արդյունքներ են, իսկ ընթերցանության և բնական գիտությունների մասով էական է աղջիկների առավելությունը, որի ուղղությամբ, ըստ նախարարի, անհրաժեշտ է մեծ խորությամբ աշխատանք իրականացնել: Ժաննա Անդրեասյանն անդրադարձել է նաև այն ցուցանիշներին, թե ինչպես են երեխաները վերաբերվում

իրենց միջավայրին և ինչ դիրքորոշումներ ունեն: Երեխաների 68%-ը նշել է, որ հաճույքով է նոր գիտելիքներ ձեռք բերում բնագիտության շրջանակում: Մյուս կարևոր ուղղությունը դպրոցին պատկանելիության զգացումն է. ՀՀ երեխաների 82%-ը դպրոցին պատկանելիության զգացում ունի, նրանց 83%-ը տոկոսը հեշտությամբ է ընկերներ ձեռք բերում, և այս գործոնն առաջ է բերում 7 միավորի առավելություն բնական գիտությունների պարագայում: Ժաննա Անդրեասյանն անդրադարձել է նաև այն հարցին, թե ի՞նչն է սահմանափակում սովորելը: Նրա խոսքով՝ ամենակարևոր գործոններից մեկը, որն ազդում է արդյունքի վրա, կրթության ոլորտի ֆինանսավորումն է: Նախարարը ներկայացրել է մի շարք ցուցանիշներ, որոնք ցույց են տալիս, թե ինչպես է ՀՀ Կառավարությունը վերանայել կրթության ոլորտի ֆինանսավորումը: Մասնավորապես՝ եթե 2018 թվականին ոլորտին հատկացվել է 128.3 միլիարդ դրամ, ապա 2026 թվականին արձանագրվել է 176% աճ՝ հասնելով 353.9 միլիարդ դրամի: Նրա խոսքով՝ առավելապես աճել է հանրակրթության ոլորտ ֆինանսավորումը. 2018 թվականին այն եղել է 103.1 մլրդ դրամ, իսկ 2026 թվականին արձանագրվել է 192%-ով աճ՝ հասնելով 300.9 մլրդ դրամի: «Այն երկրները, որոնք ավելի շատ են ներդնում կրթության ոլորտում, սովորաբար ունենում են ավելի բարձր արդյունքներ: Իհարկե, նաև կարևոր է սոցիալ-տնտեսական միջավայրը և, առաջին հերթին, դպրոցական ենթակառուցվածքը: Կառավարության մեծածավալ դպրոցաշինության ծրագիրը, ըստ այդմ, ուղիղ կապ ունի կրթության որակի և արդյունքների հետ: Արդեն իսկ գործող 300 դպրոցի ծրագիրն ավարտում ենք. մինչև տարվա վերջ 305 դպրոց կունենանք, այս պահին արդեն ավելի քան 220 դպրոցում աշխատանքներն ավարտված են: Հատկապես մեծ շեշտադրում ենք արել փոքր գյուղական դպրոցներին, որտեղ պայմանները շատ ավելի վատն էին. 86%-ն արդեն լաբորատորիաներ ունի, իսկ մինչև տարեվերջ բոլորը կունենան: Մյուս կարևոր գործոնը, որը ցույց է տալիս նաև կառավարության քաղաքականության դրական ազդեցությունը, ուսուցիչների պակասն է: Ուսուցչական ռեֆորմը բավականին բարձրացրել է այդ մասնագիտության գրավչությունը. եթե ՏՀԶԿ-ի երկրներում ուսուցիչների պակասի միջին ցուցանիշը 39% է, ապա մեզ մոտ 16% է գրանցվել, այսինքն՝ էապես ցածր է: Մեզ մոտ էապես պակաս է նաև բավարար որակավորում չունեցող ուսուցիչների ցուցանիշը՝ ՏՀԶԿ միջին 25%-ի դիմաց 5%»,-նշել է նախարարը՝ այդ համատեքստում ներկայացնելով ուսուցիչների խրախուսման ու մասնագիտական զարգացմանն ուղղված ծրագրերը, որոնք իրենց արդյունքը տվել են: Ժաննա Անդրեասյանը միաժամանակ մտահոգիչ ցուցանիշ է արձանագրել, թե ինչքան ժամանակ են երեխաներն անցկացնում տնային աշխատանքի վրա: «Միջինում օրական երկու ժամ է, որն ավելի շատ է, քան ՏՀԶԿ միջինը, և սա ցույց է տալիս, որ հանձնարարությունների ծավալը չի որոշում, թե ինչպես են սովորում երեխաները. ճիշտ մեթոդը պետք է գտնել: Հաջորդ ցուցանիշը վերաբերում է նրան, թե ինչպիսի միջավայրում են երեխաները սովորում: Այս առումով Հայաստանը լավ ցուցանիշներ ունի, և այստեղ կարծես առաջին տեղում ենք. մեր երեխաների 94%-ն իրեն անվտանգ է զգում դպրոց գնալիս, 91%-ը չի ենթարկվում բուլինգի, իսկ կիբերբուլինգի մասին հաղորդել է 2,7%-ը: Նաև բավականին լավ իրավիճակ ունենք կարգապահության տեսանկյունից, որը նույնպես ազդում է սովորելու որակի վրա. 86%-ը նշել է, որ անկարգապահության խնդիրներ չի դիտարկել: Հաջորդը՝ ուսուցչի կողմից աջակցությունն է սովորողին, որը մեր

համակարգի ամենաուժեղ կողմերից մեկն է. 84%-ը նշել է, որ անհրաժեշտ աջակցություն ստանում է ուսուցչից»,-նշել է նախարարը: Ժաննա Անդրեասյանն անդրադարձել է նաև սմարթֆոնների ու արհեստական բանականության օգտագործման հետ կապված ցուցանիշներին: «Մեր երկիրը բավականին բարձր ցուցանիշ ունի սմարթֆոնի՝ դպրոցում կիրառելուն՝ որպես ժամանց, և այդ ուղղությամբ համապատասխան կարգավորումներ ենք նախատեսում: Արհեստական բանականությունը տնային աշխատանքներում կիրառելու հարցում ևս մեր սովորողները համեմատաբար ակտիվ են, սակայն այն դեռևս չի դառնում այնպիսի հմտություն, որն օգտագործվում է նաև այդ գիտելիքի կիրառականության տեսանկյունից: Հետևաբար, այս ամենից կարելի է անել մի կարևոր հետևություն՝ բարեփոխումները ճիշտ ուղղությամբ են ընթանում կոմպետենցիաների զարգացման, ենթակառուցվածքների, ուսուցիչների խրախուսման ծրագրերի առումով, բայց առկա է լրջագույն մարտահրավեր՝ ելակետային շեմը, բազային հմտությունները ցածր են: Ունենք ուժեղ կողմեր, որոնք օգտագործելով՝ պետք է ավելի լավ արդյունքների հասնենք»,- իր զեկույցը ամփոփել է Ժաննա Անդրեասյանը:

Որպես հարակից զեկուցող հանդես է եկել **Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության ներկայացուցիչ Արմեն Մարտիրոսյանը**՝ նշելով, որ զեկույցը պատրաստվել է խորհրդի անդամ Հովսեփ Խուրշուդյանի հետ համատեղ, ապա լրամշակվել է խորհրդի մյուս անդամների առաջարկների և դիտարկումների հիման վրա: Նա շնորհակալություն է հայտնել ՀՀ կառավարությանը՝ հետազոտությանը մասնակցելու համարձակ որոշման համար՝ նախապես գիտակցելով, որ արդյունքը հաճելի չի լինելու: Արմեն Մարտիրոսյանը, ներկայացնելով երկու պատկեր՝ 2019 և 2023 թվականների 4-րդ դասարանի TIMSS և 2025 թվականի 15 տարեկանների PISA մասնակցության արդյունքները, կարևորել է այն փաստը, թե ինչ է կատարվում երեխաների հետ 10-ից մինչև 15 տարեկանը: Նա անդրադարձել է ընթերցանության ցուցանիշներին, մասնավորապես՝ PISA-ի մեթոդաբանությանը և սովորողների ըմբռնողական ընթերցանությանը, գիրք կարդալու մշակույթի փոփոխությանը՝ սկսած դեռևս վաղ մանկության տարիներից: Նրա խոսքով՝ ընթերցանության և մտածողության խնդիրը սկսվում է ընտանիքից, շարունակվում մանկապարտեզում, դպրոցում, բուհում և աշխատավայրում: Արմեն Մարտիրոսյանը բերել է ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալները մանկապարտեզներ հաճախելիության, նախադպրոցական ծառայություն չունեցող բնակավայրերի և մասնավոր մանկապարտեզների վերաբերյալ և դրանք համեմատել Ղազախստանի օրինակի հետ: Ընթերցանության վերաբերյալ ևս նա համեմատականներ է անցկացրել Հայաստանի և Վրաստանի միջև՝ նշելով, որ Վրաստանում ամենամեծ ընթերցող խումբը 13-25 տարեկաններն են, իսկ Հայաստանում՝ 35-40 տարեկանները: Ըստ Արմեն Մարտիրոսյանի՝ ՀՀ կրթական համակարգն ի վիճակի է լուծել ընթերցանության խնդիրը, սակայն այն չի լուծվում, քանի որ խնդիրը դրված չէ՝ որպես օրինակ մատնանշելով, որ Կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրում գիրք բառը բացակայում է, իսկ գրադարան և ընթերցանություն բառերը նշվում են միայն մեկ անգամ: Արմեն Մարտիրոսյանն անդրադարձել է նաև գրադարանների՝ համակարգված կերպով համալրման խնդրին, գրահրատարակչության հարցերին,

դպրոցական գրադարաններին, աշակերտի կյանքում գրադարանավարի կարևորությանը: Նա անդրադարձել է նաև ուսուցիչների և գրադարանավարների վարձատրության մեխանիզմներին, ինչպես նաև տպագիր և էլեկտրոնային գրքերին՝ բերելով մի շարք երկրների օրինակներ: Արմեն Մարտիրոսյանը նաև ներկայացրել է բարեփոխումների ընթացքում առաջացած խնդիրների և դրանց լուծման ուղիների վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև հանդես եկել հստակ առաջարկներով՝ ինչ անել մինչև 2029 թվականը՝ PISA-ի հաջորդ հետազոտությունը, առաջիկա տասնամյակի անելիքները. 1. Ուսուցիչները դեմ չեն բարեփոխմանը. նրանց պարզապես պետք է բացատրել: Հետևաբար, յուրաքանչյուր բարեփոխում պետք է ունենա՝ «ուսուցիչը հասկացե՞լ է» ստուգում, այլ ոչ միայն «դասընթացն անցկացվե՞լ է» հաշվետվություն: 2. Ընթերցանության ազգային ստուգման արդյունքն ամեն տարի տալ ծնողին մեկ էջով՝ կարդու՞մ է արդյոք իմ երեխան ըմբռնումով, թե՞ ոչ: Երբ ծնողը գիտի, նա սկսում է պահանջել: 3. Թեստը թող գրի մասնագետը. պետական պատվերով պատրաստել թեստաբանների փոքր խումբ: 4. Նայել դասարանի ներսը. դասերի դիտարկման փոքր, ազնիվ հետազոտություն և իրական հաճախումների հաշվառում: 5. Ցույց տալ, որ սովորելն արժե. անել այն, ինչ արվում է ամբողջ աշխարհում՝ հրապարակել, թե յուրաքանչյուր բուհի և մասնագիտության շրջանավարտները մեկ և երեք տարի անց որտեղ են աշխատում և ինչ են վաստակում: Առաջարկներ՝ ուղղված մինչև 2029 թվականը. 15-ամյա դպրոցականները, որոնք PISA կգրեն 2029-ի գարնանը, այսօր 7-8-րդ դասարանում են: Նրանց վրա կարող են ազդել միայն այն միջոցները, որոնք վերաբերում են 7-9-րդ դասարաններին: Երեք լուծում՝ 1. Վերափոխել 9-րդ դասարանի քննությունը. 2027-ին 2029-ի շրջանավարտների համար հայտարարել, որ քննությունը կունենա հասկանալի մակարդակներ և կիրառման առաջադրանքներ, ոչ թե զուտ վերապատմություն: 2. Տեսչական մարմնի ընթերցանության ստուգումը դարձնել համազգային և ամենամյա՝ 4-րդ և 8-րդ դասարաններում, և հետևել նույն երեխային: 3. Գիրքն ու գրադարանը դարձնել ռազմավարություն. 2027-2030 թթ. երկրորդ փուլում ամրագրել գրադարանի ամենամյա համալրման պարտադիր տողը, գրադարանավարների վերապատրաստումը, ընթերցանության չափելի ցուցանիշը և Շվեդիայի օրինակով՝ առաջարկվող ընթերցանության ցանկ՝ երաշխիքով, որ այդ գրքերը կան յուրաքանչյուր դպրոցում: Զուգահեռաբար՝ հաճախումների և դասի ժամանակ ներդնել հեռախոսներից օգտվելու միասնական կանոններ: Սահմանված նպատակների պահպանման կարևորություն՝ հետագա տարիների համար. 1. Կրթության ճգնաժամը հայտարարել ազգային արտակարգ առաջնահերթություն՝ Կառավարության հատուկ որոշմամբ և հատուկ ռեժիմով. ոչ թե իրավական «արտակարգ դրություն», այլ ամբողջ Կառավարության պարտավորություն: 2. Կրթության նախարարին տալ փոխվարչապետի կարգավիճակ, որպեսզի կրթությունը համակարգի ֆինանսների, տարածքային կառավարման և սոցիալական ոլորտի որոշումները, ոչ թե խնդրի դրանք: 3. Ստեղծել Կրթության բարեփոխման ազգային խորհուրդ՝ Կառավարության, ընդդիմության, փորձագիտական համայնքի, ուսուցիչների և ծնողների մասնակցությամբ, որը պատասխանատու կլինի 20-ամյա ռազմավարության և դրա կատարման մոնիթորինգի համար: 4. Ռազմավարության հիմնական նպատակներն ու այդ խորհուրդն ամրագրել այնպես, որ հաջորդ կառավարությունը չկարողանա դրանք

չեղարկել: Դրանք իրականացնել Սահմանադրության փոփոխությամբ, իսկ եթե դա երկար գործընթաց է՝ սահմանադրական օրենքով, որը փոխելու համար պահանջվում է որակյալ մեծամասնություն: Արմեն Մարտիրոսյանի խոսքով՝ վերոնշյալն անհրաժեշտ է, որպեսզի գործող Կառավարության համարձակ որոշումները շարունակվեն նաև վաղը՝ անկախ նրանից, թե ով կլինի իշխանության ղեկին: Վերջինս, ամփոփելով իր խոսքը, նշել է, որ ցանկացած բարեփոխում ցավոտ է, իսկ ցավը բացատրելու միակ ձևն ախտորոշումն է, որն այսօր կա, և այն ազնիվ է. դա այս կառավարության համարձակությունն էր: Ըստ Արմեն Մարտիրոսյանի՝ «գիրք» և «ընթերցանություն» բառերը պետք է հայտնվեն ծրագրում՝ թվերով և գումարով, իսկ դրված խնդիրը լուծելի է անգամ ներկա դպրոցով:

Ի պատասխան Արմեն Մարտիրոսյանի զեկույցի՝ նախարար Ժաննա Անդրեասյանը շնորհակալություն է հայտնել նրան և զեկույցի վրա աշխատած մյուս գործընկերներին: Նա կարևորել է տարբեր ցուցանիշներին անդրադառնալը և տարբեր երկրների փորձը ներկայացնելը, բայց առավել կարևոր է համարել առաջին հերթին մեր երկրի աշխատանքը և օրինակները դիտարկելը, որոնք հասանելի են. դրանք Կառավարության զեկույցում են հրապարակված: Նախարարը նաև ներկայացրել է մի քանի դիտարկումներ մանկապարտեզներում ընդգրկվածության ցուցանիշների վերաբերյալ: Անդրադառնալով Ղազախստանի օրինակին՝ Ժաննա Անդրեասյանը նշել է, որ ՀՀ կառավարությունը մի քանի ամիս առաջ է որոշում կայացրել մասնավոր մանկապարտեզներում երեխաների ֆինանսավորման մասին, որը հաջորդ տարվանից ներդրվելու է Վանաձորում, Երևանում, Գյումրիում: Նախարարի կարծիքով՝ պետք է փոխվի վերաբերմունքը ընթերցանության հանդեպ. գլխավոր կոնցեպտուալ փոփոխությունն է՝ սովորեցնել երեխային ընթերցանություն: Նախարարն անդրադարձել է նաև դասագրքերի դյուրընթեռնելիությանը: Նա նշել է, որ Իդրաֆթ հարթակում դրված է դասագրքերի կարգի փոփոխությունը, որը տվյալ տարիքի և տվյալ մակարդակի համապատասխան տեքստի մատչելիությունն է ստուգում և կիրառվելու է որպես փորձաքննության մաս: Նախարարի կարծիքով՝ պետք է ունենալ բովանդակային ու մասնագիտական քննարկումներ, և հետևողական աշխատանքի արդյունքում հնարավոր կլինի փոփոխություններ անել: Ներկայացնելով վերջին տարիներին ամբողջ աշխարհում ընթերցանության կորի նվազումը՝ նա նշել է, որ խորքային ուսումնասիրելու կարիք կա՝ ի՞նչ է տեղի ունենում կրթական համակարգում, ինչպե՞ս են տեխնոլոգիաները փոխում մեր մոտեցումները: Նախարարը կարևորել է նաև ծնողների ներգրավվածությունը, ընտանիքի աջակցությունը կրթության հարցում, որի մասով գրեթե բոլոր երկրներում, ոչ միայն Հայաստանում, կրճատում է նկատվում, ինչն էլ ազդում է PISA-ի ամբողջական արդյունքների վրա: Եվս մեկ անգամ շնորհակալություն հայտնելով հետաքրքիր զեկուցման համար՝ նախարարն առաջարկել է խորհրդի անդամներին ներկայացնել իրենց դիտարկումներն ու առաջարկները:

Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության ներկայացուցիչ, Արմատ ծրագրի ղեկավար Սեդրակ Վարդանյանը, կարևորելով խնդիրը, առաջարկել է ստեղծել միջոցառումների և գործողությունների մի համակարգ, որի

արդյունքում կգնահատվեն լրացուցիչ ծախսերը, և 2027 թվականի պետական բյուջեում կվերանայվեն կրթական ոլորտի ֆինանսական հատկացումները: Սեդրակ Վարդանյանը կարևորել է նաև դպրոցներում նախագծային ուսուցումը՝ առաջարկելով նախարարությանը ստեղծել աշխատանքային խումբ և մշակել մեթոդաբանություն: Ըստ Վարդանյանի՝ պետք չէ սպասել PISA-ի հերթական հետազոտությանը, այլ անհրաժեշտ է ստեղծել տեղական գնահատման համակարգ և այն իրականացնել յուրաքանչյուր տարի: Նա անդրադարձել է նաև դպրոցականների, ծնողների և ուսուցիչների հարմարվողականության խնդրին:

Ի պատասխան՝ նախարար Ժաննա Անդրեասյանն առաջարկել է բյուջեի հետ կապված ներկայացնել կոնկրետ առաջարկներ՝ ծրագրերի իրականացման ուղղությամբ: Նա տեղեկացրել է, որ հանրակրթության պետական չափորոշչով նախագծային ուսուցումը բոլոր դպրոցներում պարտադիր է և իրականացվում է՝ ըստ հաստատված մեթոդաբանության: Ավելին՝ մեծացել է նախագծերի թիվը, իսկ բնագիտական ուղղությունից նախագիծը դարձել է պարտադիր, որի համար ուսուցիչներն առանձին վարձատրվում են: Անդրադառնալով գնահատման համակարգին՝ նախարարն ընդգծել է, որ այն պետք է համահունչ լինի չափորոշչային պահանջներին, և այստեղ մեծ աշխատանք կա անելու: Նրա խոսքով՝ այս տարի իրականացված փոփոխությամբ՝ բնագիտական առարկաներից երեխաներն ավարտական քննությունը կարող են հանձնել նաև նախագծի տեսքով, ինչպես նաև պարտադիր է դարձել գրականության և պատմության համադրված էսսեն: Ըստ նախարարի՝ այս ամենը պետք է օգնի բարելավել երեխաների վերլուծական հմտությունները, որոնց պակասը երևում է նաև PISA-ում: Նախարարն առաջարկել է, որ խորհրդի անդամներն ուսումնասիրեն դպրոցներում կիրառվող փորձը և այն բարելավելու նպատակով ներկայացնեն առաջարկներ:

Վանաձորի թիվ 8 հիմնական դպրոցի տնօրեն Անուշ Սարուխանյանն առաջարկել է PISA-ի հարցաշարերի փաթեթներն ամբողջական տրամադրել դպրոցներին, որպեսզի հնարավորություն ունենան ծանոթանալ դրանց մեթոդաբանությանը՝ դպրոցների մանկավարժների կողմից համապատասխան առաջարկների տրամադրման համատեքստում: Նրան նաև հետաքրքրել է, թե ԳԹԿ-ի կողմից իրականացող արտաքին գնահատումը որքանով է նույնական PISA-ի հարցաշարերի հետ:

Ի պատասխան՝ նախարար Ժաննա Անդրեասյանը նշել է, որ PISA-ի առանձնահատկություններից մեկն այն է, որ տվյալների բազան հասանելի է, բայց հարցաշարերը հիմնականում հրապարակման ենթակա չեն, քանի որ կան խարիսխային առաջադրանքներ, որոնք կարող են շրջափուլից շրջափուլ կիրառվել: Այդուհանդերձ, պարբերաբար որոշ նմուշներ ու օրինակներ հրապարակվում են: Ժաննա Անդրեասյանն ընդգծել է, որ ԳԹԿ-ի իրականացրած հետազոտությունը բավական համադրելի է միջազգային հետազոտությունների առաջադրանքների տիպերի հետ՝ առաջարկելով ծանոթանալ վերլուծություններին: Ըստ նախարարի՝ այդ վերլուծությունները պետք է կատարվեն նաև դպրոցի մակարդակում, և ուսուցիչները կարողանան իրենց ամենօրյա աշխատանքի ընթացքում դա հաշվի առնել:

«Մայր Հայաստան» ռազմական պատմության թանգարանի գիտական բաժնի վարիչ Արմեն Խաչատրյանը, բարձրաձայնելով կրթական համակարգի մի շարք խնդիրներ, հանդես է եկել համապատասխան հարցադրումներով՝ 1. Ի՞նչ կոնկրետ քայլեր է անում նախարարությունը 5-9-րդ դասարանների ծրագրերը լավարկելու և դասագրքերը բեռնաթափելու համար 2. Երեխաների գրեթե 30%-ը 10 տարեկանում չի կարողանում ըմբռնել իր կարդացածը, սակայն ընթերցանության մակարդակը դպրոցներում չի ստուգվել առնվազն 2010 թվականից: Ինչպե՞ս է կառավարում մի գործընթաց, որը տարիներով չի չափվել: 3. Միջազգային զեկույցներում նշվում է, որ Հայաստանում տարրական տարիքի երեխաների 9%-ը հաշվառված չէ դպրոցներում. արդյոք emis.am համակարգի սխա՞լն է, թե՞ իրականում առկա են դպրոց չհաճախող բազմաթիվ երեխաներ 4. 15 տարեկանում տղաները կարդալուց և հասկանալուց մոտ երկու տարով կամ 40 միավորով հետ են մնում աղջիկներից, իսկ դպրոցներում գրեթե տղամարդ ուսուցիչ չի մնացել: Կա՞ հատուկ ծրագիր հենց տղաներին կարդալ սովորեցնելու համար: 5. Ի՞նչ իրավական կամ վարչական լծակներ են տրվելու ուսուցիչներին՝ դասը տապալող աշակերտներին զսպելու և սովորող երեխաներին բուլինգից պաշտպանելու համար, ի՞նչ է արվում, որ դպրոցական հոգեբանները ոչ թե թղթաբանությամբ զբաղվեն, այլ զսպեն դասարանային բուլինգը: 6. Արդյոք նախարարությունը պատրաստվո՞ւմ է վերջ դնել դասերից տարեկան հարյուրավոր ժամեր բացակայող կամ անբավարար գիտելիքներ ունեցող երեխաներին ձևականորեն հաջորդ դասարան փոխադրելու պրակտիկային: Արմեն Խաչատրյանը հարցադրումներին զուգահեռ՝ հանդես է եկել նաև որոշ առաջարկներով, այն է՝ պետությունը կրթության ոլորտում ունենա երկու հստակ չափելի մոտեցում և ամեն տարի հաշվետու լինի դրանց համար, այն է՝ 1. 10 տարեկանում յուրաքանչյուր երեխա պետք է հասկանալով կարդա. ամեն տարի ստուգել ընթերցանությունը, 4-րդ դասարանում ներդնել կարդալու և հասկանալու պարտադիր սովորույթ: Վերապատրաստել ուսուցիչներին. տարրական դասարանի ուսուցիչներին վերապատրաստել հենց դպրոցներում մենթորների միջոցով, թե ինչպես երեխային սովորեցնել քննադատական մտածողություն: Ամենօրյա կարդալու ժամ. դպրոցներում ամեն օր 20 րոպե պարտադիր հատկացնել գիրք կարդալուն և քննարկելուն: Գյուղական բնակավայրերում մեծացնել մանկապարտեզների թիվը, որ երեխաները դպրոց գնան արդեն պատրաստված: 2. 15 տարեկանում յուրաքանչյուր դեռահաս պետք է կարողանա իր գիտելիքը կիրառել: Թեթևացնել ծրագրերը. 5-9-րդ դասարանների դասագրքերից կրճատել անգիր արվող նյութերի մեկ քառորդը: 9-րդ դասարանի ավարտական քննությունները կազմակերպել այնպես, որ ստուգվի ոչ թե անգիր արածը, այլ երեխայի կիրառական մտածողությունը: Դպրոցներում մտցնել դասի ժամանակ հեռախոսներն արգելելու կամ սահմանափակելու միասնական խիստ կանոններ, ինչը ենթադրում է դասագրքերից QR կոդերի բացառում: Ուսուցչի իրավական պաշտպանվածություն. սահմանել հստակ ներքին կարգապահական կանոններ, եթե աշակերտը միտումնավոր պարբերաբար խանգարում է դասը, ուսուցիչն իրավունք ունենա նրան տվյալ ժամին հեռացնել դասարանից հոգեբանի կամ տնօրինության հսկողության ներքո: Բուլինգի դեմ պարտադիր արձագանք. յուրաքանչյուր դպրոցում ներդնել բուլինգի արձանագրման հստակ մեխանիզմ, սովորող երեխայի նկատմամբ ցանկացած ճնշում պետք է բերի ծնողի անհապաղ կանչի և հոգեբանական երկարաժամկետ աշխատանքի, աշակերտ, ծնող,

մանկավարժ, սերտ համագործակցության: Ակումբների և խմբակների ներդրում. որպեսզի դեռահասներն իրենց էներգիան ու ձգտումը դրսևորեն արդյունավետ եղանակով, դպրոցներում ներդնել սպորտային, տեխնոլոգիական (ռոբոտաշինություն) կամ բանավեճի ակումբներ: Կարգավորել աշակերտների ձևական փոխադրումները. ովքեր շարունակաբար չեն սովորում, չեն հաճախում դասերի և չեն հաղթահարում նվազագույն շեմը, չպետք է ավտոմատ փոխադրվեն հաջորդ դասարան: Ստեղծել հատուկ արհեստագործական դասարաններ հատկապես 5-9-րդ դասարաններում. այն երեխաներին, որոնք չեն ցանկանում կամ չեն կարողանում հանրակրթություն ստանալ, պետք է հնարավորություն տալ դպրոցի ներսում սովորել կոնկրետ արհեստներ:

«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամի ներկայացուցիչ Վահրամ Սողոմոնյանը շնորհակալություն է հայտնել քննարկման նախաձեռնողներին և առաջարկել, որպեսզի դրանք ավելի շատ լինեն: Նա շնորհակալություն է հայտնել նախարարությանը, որ չնայած բոլոր բարդություններին՝ բարեփոխումների օրակարգը մնում է, և անկախ նրանից, որ կան կոմունիկացիոն և այլ խնդիրներ, ընդհանուր վեկտորը կա և առաջարկել է PISA-ի առիթը օգտագործել, որպեսզի ավելի մասնակցային դառնա գործընթացը: Նա առաջարկել է մտածել դասացուցակների ճանրաբեռնվածության մասին, ինչպես նաև անդրադարձել ժողովրդավարական մշակույթի ձևավորմանը: Նրա խոսքով՝ PISA-ի տվյալներն ավելի շատ խոսում են արժեքային միջավայրի մասին, բայց դպրոցն այդ միջավայրը չի ստեղծում: Նրա կարծիքով՝ պետության քաղաքականությունները բավականին անհատական են, այսինքն՝ ուղղված են առանձին ուսուցչին, սովորողին, ծնողին, բայց դրանք ուղղված չեն դպրոցին՝ որպես միջավայր, որպես ժողովրդավարության բջիջ: Նրան հետաքրքրել է՝ արդյոք դպրոցում վերարտադրվո՞ւմ են ժողովրդավարական արժեքները և կա՞ մասնակցային միջավայր, որովհետև, ըստ նրա, ուսուցիչների ավտորիտար մտածելակերպը կարող է ի չիք դարձնել բոլոր տեսակի բարեփոխումները և հասարակական փոփոխությունները: Վերջինս առաջարկել է ստեղծել արտաքին գնահատման տեղական մեխանիզմ, որ ամեն տարի հնարավոր լինի ստուգել համապատասխան կարողունակությունները, ինչպես նաև շատացնել քննարկումների մասնակցային ֆորմատները:

Ի պատասխան՝ նախարարը նշել է, որ Երևանի պետական համալսարանում վաղը տեղի է ունենալու ուսուցչական համաժողով, որի կենտրոնում լինելու է հենց ընթերցանության հարցը: Նա բոլոր հետաքրքրվող գործընկերներին հրավիրել է ներկա լինել և մասնակցել տարբեր թեմատիկ քննարկումներին:

Հայաստանի գործատուների հանրապետական միության տնօրեն Լիլիթ Ադամյանին հետաքրքրել է՝ արդյոք նախարարությունը, PISA վերլուծության արդյունքով պայմանավորված, նախատեսում է քաղաքականության փոփոխություն դպրոցներում՝ ուսուցման մեթոդաբանություն, ուսուցիչների վերապատրաստում և այլն, քանի որ գործատուները մշտապես բարձրաձայնել են, որ իրենց պետք է գործնական գիտելիքներ և հմտություններ ունեցող աշխատուժ: Նրա խոսքով՝ խնդիրը սկսվում է հանրակրթական համակարգից և տեղափոխվում ավելի բարձր

կրթական աստիճան: Նա հայտնել է Գործատուների միության պատրաստակամությունը՝ ներգրավվել և աջակցել բարեփոխման գործընթացին:

ՌԵԱ փառատոնի համագործակցության և արտաքին կապերի համակարգող Աննա Սեթաղյանն առաջարկել է կրթական ծրագրերի համար հատկացնել հավելյալ ֆինանսավորում, որպեսզի այն աշակերտները, որոնք չափազանց ծանրաբեռնված դասարաններում են սովորում և չեն հասցնում տարվա ընթացքում լավագույնս ներգրավվել իրենց հետաքրքրող ոլորտներում, հնարավորություն ունենան ամռանը գոնե մեկ շաբաթ ճամբարի մասնակից դառնալու՝ կոնկրետ ոլորտային ուղղությամբ:

Երևանի թիվ 45 հիմնական դպրոցի ուսուցիչ Տիգրան Ենգիբարյանը կարևորել է առողջ ապրելակերպ առարկան՝ ընդգծելով, որ այն քննադատական մտածողության զարգացմանն ուղղված լավագույն առարկան է դպրոցում: Նա անդրադարձել է նաև ընթերցանության խրախուսման, աշխարհագրության նոր դասագրքի մշակման անհրաժեշտության հարցերին, ինչպես նաև գոհունակությամբ ընդգծել դպրոցներում լաբորատորիաների և գույքի համալրման փաստը: Որպես խնդիր՝ նա մատնանշել է այն հանգամանքը, որ նախագծային ուսուցման շրջանակում նախատեսվող հետազոտությունների համար բացակայում են համապատասխան ֆինանսական միջոցները, որը երբեմն իրականացվում է աշակերտների միջոցներով: Նա առաջարկել է, որ այդ ուղղությամբ դպրոցներին տրամադրվի ֆինանսավորում:

«Մարզական հոգեբանների ֆեդերացիա» ՀԿ ներկայացուցիչ Անժելա Բարխուդարյանը կարևորել է այն փաստը, որ արձանագրված խնդիրները դպրոցի հետ համատեղ նաև դիտարկվեն ընտանիքի գործառույթների շրջանակում:

«Հույս և ապագա» ՀԿ ներկայացուցիչ Էլմիրա Պողոսյանը, որպես գրադարանի տնօրեն, նշել է, որ 2022 թվականից մինչ օրս իր ներկայացրած գրադարանը համալրվել է մոտ 4000 կտոր գրքով: Նրա խոսքով՝ համալրվել են Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող համայնքային բոլոր գրադարանները:

ԿԶՆԱԿ-ի ուսուցիչների մասնագիտական զարգացման բաժնի մասնագետ Մխիթար Գասպարյանը նշել է, որ վերջին տարիներին ուսուցիչների մասնագիտական զարգացման գործում շատ կարևոր մեխանիզմներ են ներդրվել. օրինակ՝ կամավոր ատեստավորված ուսուցչի համար պետությունը ահռելի ծախս է իրականացնում: Նրան հետաքրքրել է՝ առկա՞ են արդյոք արդյունքի չափման մեխանիզմներ, և այդ ուսուցիչների մոտ դասալսումներ իրականացվո՞ւմ են: Նրա խոսքով՝ պարտադիր ատեստավորման գործընթացում մտահոգիչ հարցեր կան վերապատրաստող կազմակերպությունների վերաբերյալ: Նա առաջարկել է կենտրոնացնել և ավելի մեծացնել վերապատրաստող կազմակերպությունների վերահսկողության գործիքները: Նա առաջարկել է նաև ստեղծել որևէ հարթակ կամ ուղիղ կոմունիկացիայի մեխանիզմներ, որով հնարավոր կլինի անմիջապես նախարարին ներկայացնել խնդիրը և լուծումներ գտնել:

5) Նիստին մասնակցող խորհրդի անդամների ներկայացրած գրավոր կամ բանավոր դիրքորոշումների քննարկման արդյունքները.

Ամփոփելով նիստը՝ Ժաննա Անդրեասյանը շնորհակալություն է հայտնել շահագրգիռ քննարկման և առարկայական դիտարկումների համար՝ ընդգծելով, որ ներկայացված բոլոր առաջարկներին նախարարությունը գրավոր կանդրադառնա: Նախարարը նաև առաջարկել է հասարակական խորհրդի անդամների առաջարկներին ու դիտարկումներին, բացի գումարվող նիստերից, անդրադառնալ նաև այլ ձևաչափերով:
Նիստից հետո խորհրդի անդամները «Հակոբ Կոջոյան» կրթահամալիրի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի ուղեկցությամբ շրջայց են կատարել վերջերս վերակառուցված հաստատությունում, ծանոթացել ստեղծված ենթակառուցվածքներին:

Նիստը նախագահող՝ **ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյան**

Արձանագրող՝ **Նախարարին կից հասարակական խորհրդի աշխատանքների պատասխանատու Գայանե Առաքելյան**